**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

27 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 134-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետով, հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022 թ. փետրվարի 18-ի թիվ 16-Ն որոշումը և համայնքի բնակիչների դիմումները՝

Որոշում եմ.

1.Հաստատել համայնքի ղեկավարին կից կանանց և երիտասարդության հարցերով խորհրդակցական մարմնի հանձնաժողովի կազմը.

1) Հանձնաժողովի նախագահ՝ Սուրեն Վաչագանի Թումանյան-Թումանյան համայնքի ղեկավար

2) Հանձնաժողովի քարտուղար՝ Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան-Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

3) Հանձնաժողովի անդամ՝ Գոհարիկ Սարգսի Խաչիկյան -Թումանյան համայնքի ավագանու անդամ,

4) ----//---- Երմոնյա Ժորայի Մայիլյան-<<Թումանյանի քաղաքի մանկական արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-ի տնօրեն,

5) ----//---- Սուսաննա Հայկի Մաթևոսյան-Թումանյան համայնքի,Ահնիձոր գյուղի բնակիչ,

6) ----//---- Նարինե Շավարշի Թումանյան-Թումանյան համայնքի,Դսեղ գյուղի բնակիչ,

7) ----//---- Հեղինե Հենրիկի Գասպարյան-Թումանյան համայնքի,Լորուտ գյուղի բնակիչ,

8) ----//---- Կարինե Արարատի Նազարյան-Թումանյան համայնքի,Լորուտ գյուղի բնակիչ,

9) ----//---- Ալլա Ասատուրի Նիազյան-Թումանյան համայնքի,Մարց գյուղի բնակիչ,

10) ----//---- Անուշ Համլետի Մխիթարյան-Թումանյան համայնքի,Չկալով գյուղի բնակիչ,

11) ----//---- Աննա Կամոյի Եղինյան-Թումանյան համայնքի,Քարինջ գյուղի բնակիչ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. մայիսի 27
ք.Թումանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 135-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԴՍԵՂ ԳՅՈՒՂԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-035-0004-0003 ԾԱԾԿԱԳՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՆՈՒՇ ՍՈՒՐԵՆԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԱՐԻՍՊԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով,<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022 թվականի թիվ 14-Ն որոշմամբ,Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով, հաշվի առնելով, որ Անուշ Սուրենի Խաչատրյանի կողմից ինքնակամ կառուցված պարիսպը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող անձի ԱՁ <<Արտյոմ Սաքանյան>>-ի կողմից չափագրված պարիսպի հատակագիծը, ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը և քաղ.-ուհի Անուշ Սուրենի Խաչատրյանի /մուտք՝27.05.2022թ. թիվ 351/ դիմումը՝

Որոշում եմ.

1. Քաղ.-ուհի Անուշ Սուրենի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնք,գ. Դսեղ,12-րդ փողոց, թիվ 62 հասցեում գտնվող 0,1136հա մակերեսով բնակելի կառուցա-պատման հողամասում /վկայական՝ N 26102021-06-0043/ ինքնակամ կառուցված 42,8քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:

2. Պարիսպը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3. Անուշ Սուրենի Խաչատրյանին՝ Թումանյանի համայնքապետարանի 900265002528 հաշվեհամարին ինքնակամ կառուցված պարիսպի օրինականացման համար վճարել 19080.24 /տասնինը հազար ութանասուն դրամ քսանչորս լումա/ ՀՀ դրամ:

4. Որոշման ընդունման օրվանից ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման գումարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Վերջիններիս վճարման անդորրագիրը հանդիսանում է սույն որոշման անբաժանելի մասը:

6. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. մայիսի 31
ք.Թումանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

31 ՄԱՅԻՍԻ 2022թվականի N 136-Ա

## "ՀԿ ԿԵՆՏՐՈՆ" ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԿ-ԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի պահանջով և հիմք ընդունելով "ՀԿ Կենտրոն" քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի նախագահ Արփինե Հակոբյանի 30․05թ. 2022 թ.թիվ NGOC-E-84/22 դիմումը՝
Որոշում եմ.

1․Թույլատրել "ՀԿ Կենտրոն" քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ին սեփականության իրավունքով պատկանող 06-035-0125-0097 կադաստրային ծածկագրով հողամասում տեղադրել էլեկտրական հենասյուն, պահպանելով շինարարական նորմերն ու կանոնները:
2. Շինարարական աշխատանքների կատարման թույլտվության համար համայնքապետարանի 900265129289 հաշվեհամարին փոխանցել 15000 ՀՀ դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022 թ. մայիսի 31
ք.Թումանյան